ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Գերմանական համագործակցություն DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by giz

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

ՀՀ պատական կառավարման ակադեմիա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՄՈԴՈՒԼ 2.

Համայնքի ավագանուն՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով վերապահված լիազորությունները

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Երևան, 2024

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ)

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.

Համայնքի ղեկավարը ավագանու նիստի քննարկմանն է ներկայացնում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին որոշման նախագիծը: Զեկուցողը ներկայացնում է որոշման նախագիծը, նախագծի հիմնավորումը, հաշվետվությունը, դրա հանրային քննարկման արդյունքների մասին ամփոփաթերթը: Քննարկման ընթացքում պարզվում է, որ չի իրականացվել բյուջեի կատարման տարեկան հաշվետվության աուդիտ:

Ինչպիսի՞ լուծում կարող է ստանալ գործընթացը:

Լուծում 1. (ոչ ցանկալի)

Ավագանու ընդդիմադիր խմբակցությունն առաջարկում է հետաձգել բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի քննարկումը, հրավիրել աուդիտորական մասնագիտական կազմակերպություն, որը հաշվետվության մասին կտա հիմնավորված եզրակացություն: Զեկուցողը պնդում է, որ դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ առկա է հաշվետվության օրինաչափության մասին ավագանու երեք անդամների եզրակացությունը, իսկ աուդիտորական մասնագիտական ծառայություն ձեռք բերելը բյուջեի լրացուցիչ ծախս է ենթադրում, բացի այդ՝ քննարկման հետաձգման դեպքում կխախտվի հաշվետվության հաստատման համար օրենքով սահմանված վերջնաժամկետը: Նիստը վարողը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին որոշման նախագիծը դնում է քվեարկության: Ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ (իշխանական խմբակցության գերակշռող ձայներով) հաշվետվությունն ընդունվում է:
Արդյունքում բյուջեի կատարման նկատմամբ հետագայում իրականացված ֆինանսական հսկողության ժամանակ բացահայտվում է բյուջեի կատարման մի շարք խախտումներ: Այդ հիմքով ավագանու ընդդիմադիր խմբակցությունը նախաձեռնում է համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու գործընթաց:

Լուծում 2. (ցանկալի տարբերակ)

Ավագանու ընդդիմադիր խմբակցությունն առաջարկում է հետաձգել բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի քննարկումը, հրավիրել աուդիտորական մասնագիտական կազմակերպություն, որը հաշվետվության մասին կտա հիմնավորված եզրակացություն: Գործընթացն արագ իրականացնելու նպատակով առաջարկվում է ավագանու որոշմամբ աուդիտորական մասնագիտական ծառայության ձեռքբերումը համարել անհետաձգելի պահանջ և թույլատրել ծառայության գնումը կատարել մեկ անձից:

Միաժամանակ համայնքի ղեկավարին առաջարկվում է գրություն ուղարկել մարզպետին՝ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու օրենքով սահմանված վերջնաժամկետը խախտելու պատճառների հիմնավորման մասին: Նիստը վարողը ներկայացված առաջարկները դնում է քվեարկության: Ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ առաջարկներն ընդունվում են:
Արդյունքում արագացված ընթացակարգով հրավիրվում է աուդիտորական մասնագիտական կազմակերպություն, որն ուսումնասիրում է համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը և ավագանուն է ներկայացնում դրական եզրակացություն: Ավագանին հաստատում է հաշվետվությունը:

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.

Ավագանու քննարկմանն է ներկայացվում համայնքում հաջորդ տարվա տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին որոշման նախագիծը: Տեղական տուրքերի և վճարների մեծամասնության համար առաջարկվում է սահմանել բարձրացված դրույքաչափեր:

Ինչպիսի՞ լուծում կարող է ստանալ գործընթացը:

Լուծում 1. (ոչ ցանկալի)

Համայնքում հաջորդ տարվա տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին որոշման նախագիծը ավագանու կողմից ընդունվելուց առաջ պատշաճ կարգով նախագծի հանրային քննարկում չի իրականացվում, բնակիչները սահմանված կարգով չեն իրազեկվում նախատեսվող փոփոխությունների մասին:
Արդյունքում՝ բյուջետային տարին սկսվելուց հետո տեղական տուրքերի և վճարների մեծ մասի համար բարձրացված դրույքաչափերի տեսքով տհաճ անակնկալ է սպասվում համայնքի բնակիչներին և տնտեսավարող սուբյեկտներին՝ նրանց կանգնեցնելով բազմաթիվ դժվարությունների առջև: Համայնքում դժգոհությունների ալիք է բարձրանում, և տեղի են ունենում բողոքի ակցիաներ: Սակայն ավագանին որևէ փոփոխութուն չի կատարում: Տեղական իշխանությունների նկատմամբ նվազում է հանրային վստահությունը:

Լուծում 2. (ցանկալի տարբերակ)

Համայնքում հաջորդ տարվա տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին որոշման նախագիծը ավագանու քննարկմանը ներկայացնելուց առաջ օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է նախագծի հանրային քննարկում: Նախագիծը հրապարակվում է www.e-draft.am կայքում և առնվազն 15 օր մնում է այնտեղ: Համայնքի կենտրոնում և բոլոր բնակավայրերում անցկացվում են հանրային լսումներ, որոնց մասին հրավերը հրապարակվում է լսումներից առնվազն 15 օր

առաջ: Նախագիծը հրապարակվում է համայնքի համացանցային պաշտոնական կայքում: Հանրային լսումների և քննարկումների ժամանակ բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների ներկայացրած առարկությունների և առաջարկությունների հիման վրա կազմվում է ամփոփաթերթ, որը ներկայացվում է ավագանու քննարկմանը: Արդյունքում համայնքի ավագանին տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին որոշման նախագծում փոփոխություններ է կատարում, նվազեցնում է որոշ տուրքերի և վճարների դրույքաչափերը և որոշում է ընդունում: Համայնքում հանրային համերաշխությունը պահպանվում է: